

Ձոր օրինակ ի հնունն ի ժամանակս Դաւթայ
 35 իրեք ցասունն տվեալ Աստուծոյ Իսրայէլա-
 ցոցն, այժմ ի մեզ եղեւ հասեալ եւ կատա-
 րեալ՝ սով, սուր եւ մահ. յորոց վրկեսցէ Տէր
 Աստուած. ամէն:

ժն. ՄԵԼՔԻՍԵՒԵԿ ԿԱԹՈՂԻԿՈՍ Ի ԼԵՀՍ 1626

Իսկ ի թվին Ռէշէ¹, սեպտեմպերամսոյ, եկն
 40 ի Լէհ Էջմիածնայ Մելքիսէթ կաթողիկոսն
 ծեր՝ և ալեւոր, խելաց թափեալ եւ յուժէ ան-
 կեալ, յոյժ գինէմոլ եւ արծաթասէր, ունե-
 լով ընդ ինքեան յուրով եպիսկոպոսս հոմանիս
 իւր եւ գինարբուս. իսկ յուսմանէ բնաւին հե-
 45 ոռուս. եւ կացին ի Լով կէս տարի. ²:

37 սրոյ: — 40 էջմիածնա:

¹ Մելքիսեղեկ ի Լով հասաւ 1626, Ապրիլ 22ին եւ վախճանեցաւ 1627 Մարտ 18ին (Ն. Տ. Մարտ 27ին) ի Կամենից: «Ի թվին Ռէշէ. սեպտ.» կը հայր գէպրէ մը, որ պատահած է 1628, Սեպտեմբերին, զոր Սիմէոն միտք ունէր պատմել:

² Այսպէս միջակէտով կ'աւարտի այս հատուածը, որ ցոյց կու տայ թէ Սիմէոն յանկարծ ընդհատած է իւր տարեգրութիւնը: Յաջորդ տարիներու ազգային գէպրերու մասին տե՛ս Յաւելուած Ա. եւ Բ.: